

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԽՆԴԻՐԸ

Մարգիս Հարությունյան

Լեռնային Ղարաբաղի խնդիրը հայտնվել է Հարավային Կովկաս-Կասպյան ավազան - Կենտրոնական Ասիա գծում ընթացող աշխարհաքաղաքական զարգացումների կենտրոնում՝ ստանձնելով տարածաշրջանային փոխդասավորվածության ձևափոխման հիմնական մեխանիզմի դերակատարությունը: Հողվածում փորձ է արվում վերլուծել տարածաշրջանային ռազմաքաղաքական շարժերի ազդեցությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն առնչվող գործընթացների վրա, ներկայացնել միջնաժամկետ հեռանկարում խնդրին վերաբերող հավանական զարգացումները:

1. Տարածաշրջանային ռազմաքաղաքական հիմնական շարժերի ընդհանուր պատկերը

Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում ու Կենտրոնական Ասիայում իրականացվող նախագծերից ամենաձավալունը ԱՄՆ-ի կողմից Արևելյան Եվրոպա - Սև ծով - Հարավային Կովկաս - Կասպյան ավազան-Կենտրոնական Ասիա աշխարհառազմավարական գծի ձևավորումն է («Տրանսեվրասիական նախագիծ»), որն ունի աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական հստակ նպատակներ:

Հատկապես հետխորհրդային տարածքի մասով հաճախ Միացյալ Նահանգների հետ նույն դիրքերից է հանդես գալիս նաև Եվրամիությունը (ԵՄ): Այն նպատակ ունի լուծել Հին աշխարհի առջև ծառայած էներգետիկ անվտանգությանը և կից տարածաշրջաններում սեփական ազդեցության հաստատմանն առնչվող մի շարք հարցեր: Վաշինգտոնի պատկերացմամբ, նմանատիպ նախագծերում եվրոպացիների ներգրավվածությունը կարող է ամրապնդել անդրատլանտյան փոխգործակցությունը՝ առաջին հերթին ԱՄՆ-ին ապահովելով գլոբալ մակարդակում գործելու լրացուցիչ ռեսուրսներ:

Կովկաս, Կասպյան ավազան ու Կենտրոնական Ասիա ուղղություններով մյուս լուրջ նախագիծը ձգտում է իրագործել տնտեսական զգալի կարողություններ կուտակած Ռուսաստանը: Վերջինս մտահոգված է իրեն սահմանակից այդ հատվածներում ամերիկա-եվրոպական ազդեցության աճով և փորձում է իրավիճակը փոխել գլխավորապես հյուսիս-հարավ ուղղվածությամբ տարաբնույթ նախագծերի իրականացմամբ:

Հաջորդ կարևոր հանգամանքն այն է, որ վերջին տարիներն այդ նախագծերի իրականացման համար բեկումնային էին: Նշենք ռուս-ադրբեջանական պայմանավորվածությունների փաթեթը, իշխանափոխությունները Վրաստանում, Ուկրաինայում և ռազմական ոլորտում ամերիկա-վրացական և ամերիկա-ադրբեջանական հարաբերություններում տեղի ունեցած «ճեղքումները», նոր իրավիճակի ի հայտ գալը Կենտրոնական Ասիայում ու այդ համատեքստում՝ Մոսկվա-Տաշքենդ ռազմավարական փոխգործակցության պայմանավորվածության կայացումը և վերջապես՝ նախագահական ընտրությունների արդյունքներն Իրանում:

Հեռանկարային առումով վերը ներկայացված զարգացումների աշխարհագրական կիզակետ է դառնում Կասպիցը: Մեծ է հավանականությունը, որ իրադրությունն ավազանում և նրա շուրջ ընթացող գործընթացները հանդես են գալու եվրասիական ռազմավարական հարթությունում ուժերի փոխդասավորվածության գլխավոր ցուցիչների շարքում: Արդեն այսօր Հարավային Կովկասում ու Կենտրոնական Ասիայում առկա աշխարհաքաղաքական շարժերը կրում են Կասպիցում ընթացող գործընթացների ազդեցությունը: Կասպիցը դառնում է այն վայրը, ուր աշխարհաքաղաքական ու էներգետիկ հսկայական շահերի պատճառով կարող են որոշակի առումով *անմիջականորեն շփման մեջ մտնել* ամերիկյան ու ռուսական ուժերը՝ ի հավելումն Դրդըզստանում առկա իրավիճակի:

Այս համատեքստում իրանական հարցը ձեռք է բերում նոր իմաստ: Վաշինգտոնի համար իրանական խնդրի հանգուցալուծումը, մերձավորարևելյան ու էներգետիկ հարցերից բացի, հանդես է գալիս որպես Կասպիցում ուժերի փոխդասավորվածությունն էապես փոխելու միջոց:

Այսօր ընդհանուր պատկերը ձևավորող առաջնային գործոններից կարելի է առանձնացնել ամերիկյան ռազմաքաղաքական ծրագրերը Կասպյան ավազանում, նույն տարածաշրջանի նկատմամբ Ռուսաստանի համեմատաբար նոր նախաձեռնություններ-նախագիծը և վերջապես՝ Իրանի շուրջ առկա ռազմաքաղաքական զարգացումները:

Ամերիկյան գործոնը

Արևելյան Եվրոպա - Սև ծով - Հարավային Կովկաս-Կասպյան ավազան-Կենտրոնական Ասիա հատված ամերիկյան ներթափանցման նպատակներն ակնհայտ են: Ռազմավարական առումով դրանք ուղղված են Ռուսաստանի, Չինաստանի և Իրանի դեմ, ինչպես նաև նպատակ ունեն գերազանցապես ամերիկյան վերահսկողություն սահմանել Կենտրոնական Ասիա-Կասպյան ավազան շրջանում առկա էներգակիրների (նավթ, գազ, ուրան) նկատմամբ:

Ամերիկյան քաղաքական, տնտեսական ու ռազմական ներկայության հաստատումը Հարավային Կովկաս-Կասպյան ավազան-Կենտրոնական Ասիա գծում նշանակում է Ռուսաստանին, Չինաստանին և Իրանին կից շրջաններում այնպիսի համակարգերի ստեղծում, որոնք միտված են լինելու ամերիկյան բազմամակարդակ նախագծերի սպասարկմանը:

Էներգետիկ հարթության տեսանկյունից հանգամանքները նույնպես հայտնի են: Արդեն այս տարի նախատեսվում է շահագործման հանձնել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՋ) 1.767 կմ-ոց նավթամուղը, որը կարող է տարեկան Արևմուտք տեղափոխել 50 մլն տոննա նավթ: Նավթամուղին Ղազախստանի և Թուրքմենստանի միանալու հարցը ներկայում գտնվում է բանակցությունների ակտիվ փուլում: Եվ եթե իրականություն դառնան ԲԹՋ նավթամուղին Աստանայի և Աշգաբադի միանալու ծրագրերը, ապա Կասպիցի նավթը¹ էներգակիրների միջազգային շուկայում կարող է գրավել շոշափելի տեղ:

Բացի այդ, գոյություն ունի նաև գազի գործոնը, որն այսօր հատկապես կարևորվում է 2005թ. վերջին ծավալված ռուս-ուկրաինական գազային ճգնաժամի ֆոնին: 2006թ. նախատեսվում է շահագործման հանձնել նաև Բաքու-Թբիլիսի-Էրզրում (ԲԹԷ) գազամուղը: Այն կարող է տարեկան տեղափոխել 20 մլրդ մ³ գազ²: «*Statistical Review of World Energy 2005*» հետազոտության համաձայն, Ադրբեջանը, Ղազախստանը, Թուրքմենստանն ու Ուզբեկստանը միասին ունեն 9.13 տրիլիոն մ³ գազի պաշարներ (ողջ աշխարհի բնական գազի ապացուցված պաշարների ավելի քան 5.08%-ը)³:

Քաղաքական և տնտեսական (գլխավորապես էներգետիկ ոլորտում) բաղադրամասերից բացի, Հարավային Կովկաս-Կասպյան ավազան-Կենտրոնական Ասիա գծում ամերիկյան ներկայության հաստատման հաջորդ կարևորագույն տարրը ռազմականն է: Հարավային Կովկաս - Կասպյան ավազան - Կենտրոնական Ասիա գծում Միացյալ Նահանգների ռազմական

¹ Բրիտանական «*British Petroleum*» նավթային ընկերության «*Statistical Review of World Energy 2005*» անվամբ հետազոտության համաձայն, 2004թ. վերջի տվյալներով՝ Ադրբեջանն ուներ 7 միլիարդ բարել նավթ (ողջ աշխարհի նավթի ապացուցված պաշարների 0.6%-ը), Ղազախստանը՝ 39.6 միլիարդ բարել (3.3%), Թուրքմենստանը՝ 0.5 միլիարդ բարել (0.04%), իսկ Ուզբեկստանը՝ 0.6 միլիարդ բարել (0.05%): Համեմատության համար նշենք, որ նույն աղբյուրի հավաստմամբ, 2004թ. վերջի տվյալներով Ռուսաստանն ուներ 72.3 միլիարդ բարել նավթ (ողջ աշխարհի նավթի ապացուցված պաշարների 6.1%-ը) [1]: 2005թ. սեպտեմբերին «*France Press*» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռինո Հարնիշը նշում է, թե ըստ որոշ հետազոտությունների Կասպիցի միայն դազախական ու ադրբեջանական հատվածներում առկա է ընդամենը 37 մլրդ բարել նավթ [2, 3]:

² Համեմատության համար նշենք, որ 2003թ. փետրվարից փաստացի գործող Ռուսաստանից Թուրքիա տանող «Երկնագույն հոսք» գազամուղն ի վիճակի է տարեկան մատակարարել 16 մլրդ մ³ գազ [4]:

³ Ըստ նույն աղբյուրի՝ Սաուդյան Արաբիան, Իրաքը, Քուվեյթը, Օմանը և Բահրեյնը միասին ունեն 12.58 տրիլիոն մ³ գազի պաշարներ (ողջ աշխարհի բնական գազի ապացուցված պաշարների ավելի քան 7%-ը): Ռուսաստանը՝ 48 տրիլիոն մ³ գազ, իր պաշարներով աշխարհում գրավում է առաջին տեղը (ողջ աշխարհի բնական գազի ապացուցված պաշարների 26.7%-ը), երկրորդ տեղում Իրանն է՝ 27.5 տրիլիոն մ³ (ողջ աշխարհի բնական գազի ապացուցված պաշարների 15.3%-ը), երրորդում՝ Կատարը՝ 25.78 տրիլիոն մ³ (ողջ աշխարհի բնական գազի ապացուցված պաշարների 14.4%-ը) [1, p. 20]:

ներկայությունը չի կրում սոսկ տարածաշրջանային տրամաբանություն, այլ, փաստորեն, հանդիսանում է (և առաջին հերթին) ռազմական ոլորտում ԱՄՆ գլոբալ վերափոխումների բաղկացուցիչը:

2006թ. մարտին հրապարակված «Ամերիկայի Միացյալ Նահանգների ազգային անվտանգության ռազմավարություն» փաստաթղթում, որպես Վաշինգտոնի ռազմավարության առաջնություն, ներկայացված է ԱՄՆ ռազմական կարողությունը կանխարգելիչ հարվածներ հասցնելու գործում, ինչն, անշուշտ, ենթադրում է այդ կարողության մակարդակն աշխարհի մյուս երկրների համար անհասանելի վիճակում պահելը [5]: Այդ համատեքստում, թերևս, կարելի է որպես առաջնություններ առանձնացնել ամերիկյան հակահրթիռային պաշտպանության համակարգի և շարժուն զորամիավորումների ու օդային գլոբալ փոխադրումների համաշխարհային ցանցի ստեղծման աշխատանքները: Բնականաբար, Հարավային Կովկաս-Կասպյան ավազան-Կենտրոնական Ասիա գծում ամերիկյան ռազմական ներկայության հաստատումը հարկ է դիտարկել նաև այդ առաջնությունների համատեքստում (տե՛ս *Հավելված*):

Եթե ուզեցե՛կան «Քարշի-Խանաբադ» ռազմակայանը 2005թ. նոյեմբերին կորցնելուց հետո Կենտրոնական Ասիայում Պենտագոնը բախվեց սեփական ռազմուժի օպերատիվ հնարավորությունների սահմանափակման հարցին և, ըստ որոշ տեղեկությունների, ներկայում բավական ակտիվ ջանքեր է թափում տարածաշրջանում նոր հանգրվանների ձեռքբերման (Թուրքմենստան) և հների ընդլայնման (Ղրղըզստան) ուղղությամբ, ապա վիճակն այլ է Կասպիցում, ուր ամերիկյան ռազմուժի հաստատման և հետագա ընդլայնման թիվ մեկ հանգրվան է ծառայում Ադրբեյջանը:

Բաքվի հետ Պենտագոնի ռազմական համագործակցությունը, փաստորեն, բաժանվում է երեք մասի՝ շարժուն զորամիավորումներ, Վրաստանում կիրառված «Վարժեցրու և զինիր» ծրագրի օրինակով ծավալվող համագործակցություն՝ ուսումնավարական կենտրոններ, ուր հեռանկարում պետք է վերապատրաստվի ադրբեյջանական բանակի սպայական կազմի զգալի մասը, և հիմնական՝ «Caspian Guard» ծրագիրը: Ամերիկյան աղբյուրները նշում են նաև չորրորդ բաղադրամասի մասին. Ապշերոնյան թերակղզում՝ Բաքվի մոտ, հիմնադրվելիք արագ արձագանքման հատուկ նշանակության զորամիավորում, որը պետք է տեղակայվի համեմատաբար երկարատև հիմքերի վրա՝ փաստորեն, ընդունելով «ռազմակայան» հասկացության դասական ձևակերպումը [6]:

Ըստ ամենայնի, Ադրբեյջանում ամերիկյան շարժուն զորամիավորումների (զերազանցապես՝ օդուժ) տեղակայման ընթացքը սկսվեց 2003թ. դեկտեմբերից, երբ ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի

Բաքու կատարած երկրորդ այցից¹ հետո Ադրբեջանն ընդունեց ամերիկյան ռազմական մասնագետներին, որոնք պետք է զբաղվեին երկրի օդանավակայանների (ռազմական ու քաղաքացիական) տեխնիկական կարողությունների ուսումնասիրությամբ² [7]:

Ներկայում խոսքն Ադրբեջանի երեք օդանավակայանների մասին է՝ Քյուրդամիրի³ (որպես Ադրբեջանում ամերիկյան շարժուն զորամիավորումների, օդուժի տեղակայման հիմնական հանգրվան), Սումգայիթի մոտ գտնվող «Նաստսնի»⁴ և Բաքվից հյուսիս-արևմուտք ընկած Գյուլախի⁵ (Դավաչի շրջան) օդանավակայանների մասին՝ չհաշված Բաքվի «Բինա» միջազգային օդանավակայանը որպես վերալիցքավորման կետ օգտագործելու ամերիկյան օդուժի հնարավորությունը: Համաձայն որոշ հրապարակումների, Քյուրդամիրի ռազմական օդանավակայանը (որտեղ ավարտվել են օդանավակայանի թռիչքուղու, օդանավակայանին հարակից գորանոցների վերանորոգման և օդանավակայանի համար նախատեսված հակաօդային պաշտպանության համակարգի արդիականացման աշխատանքները) տեխնիկական կարողություններով արդեն պատրաստ է ընդունել ամերիկյան ռազմական իքնաթիռներ [8, 9]: Պետք է ենթադրել, որ առաջիկայում պատրաստ կլինեն կամ արդեն իսկ պատրաստ են⁶ Գյուլախի և «Նաստսնի» օդանավակայանները⁷:

¹ Ընդհանուր առմամբ, ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը Բաքվում եղել է չորս անգամ՝ 2001թ. դեկտեմբերի 15-ին, 2003թ. դեկտեմբերի 3-ին, 2004թ. օգոստոսի 11-12-ը և 2005թ. ապրիլի 12-ին:

² Հատկանշական է, որ այդ ժամանակ ադրբեջանական մամուլ սպրդած տեղեկության համաձայն, ադրբեջանական օդանավակայանների նկատմամբ Վաշինգտոնում ուշադրություն էին դարձրել դեռևս 2001թ., երբ ամերիկյան ռազմական հետախուզության պատվերով «RAND Corporation»-ը հատուկ ուսումնասիրություն էր անցկացրել՝ պարզելու մերձավորարևելյան ռազմական կամպանիաների ժամանակ հարավկովկասյան օդանավակայանների պիտանելիությունը ԱՄՆ ռազմուժի համար: Վրաստանում, Հայաստանում ու Ադրբեջանում առանձնացվել էին ավելի քան 20 օդանավակայաններ («համապատասխանում են նվազագույն պահանջներին»), որոնցից վեցին տրվել էին առաջին ու երկրորդ կարգեր [7]:

³ Քյուրդամիրի ռազմական օդանավակայանում ԽՍՀՄ օրոք տեղակայվում էին «Ty-22M» ծանր ումբակոծիչներ [6]:

⁴ «Նաստսնի» օդանավակայանում խորհրդային ժամանակներում տեղակայվում էին տրանսպորտային «Mi-76» ինքնաթիռները: Ամերիկյան փորձագետների կարծիքով, վերանորոգումից հետո «Նաստսնին» շարունակելու է կրել նույն գործառույթը՝ հանդիսանալով Եվրոպայից Հարավային Կովկասով դեպի Կենտրոնական Ասիա ընթացող Կասպյան օդային միջանցքի հիմնական հանգրվանը: Նախատեսվում է սկզբնական շրջանում «Նաստսնիում» տեղակայել ամերիկյան հատուկ նշանակության ուժեր տեղափոխող տրանսպորտային ինքնաթիռներ, հետախուզական ինքնաթիռներ (ենթադրվում է ամերիկյան «Boeing» ընկերության արտադրած «AWACS» ինքնաթիռներ, որոնք ավելի վաղ (2003թ.) նկատվել էին Վրաստանում), ինչպես նաև մարտական «F-16»-եր [6]:

⁵ Խորհրդային տարիներին Գյուլախում եղել է ռազմական օդանավակայան [6]:

⁶ Ռուսական աղբյուրները նշում են, որ երեք օդանավակայաններն, իրենց վերանորոգված թռիչքուղիներով, արդեն պատրաստ են ընդունել ամերիկյան ռազմաօդային ուժերին [9]:

⁷ Ամերիկյան «Stratfor» վերլուծական կենտրոնը նշում է, որ ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի 2005թ. ապրիլի 12-ին Բաքու կատարած այցի ընթացքում ադրբեջանական կողմը համաձայնել է թույլատրել ամերիկյան ռազմուժի (որոնք պետք է կոչվեն «Ժամանակավորապես տեղաբաշխված շարժուն զորամիավորումներ»՝ «Temporarily Deployed Mobile Forces») տեղակայումն իր տարածքում: Միակ հարցը, ըստ «Stratfor»-ի, տեղակայման սկիզբն է [6, 10]:

2004թ. նոյեմբերին, ադրբեջանական «Այնա» թերթի հրապարակման համաձայն, Ադրբեջանի Սալյանի շրջանի Չուխանլի բնակավայրի մոտ գտնվող այդ երկրի պաշտպանության նախարարության ուսումնավարժական կենտրոնում հանգրվանել էին ՆԱՏՕ-ական (գերագանցապես՝ ամերիկյան) ավելի քան 50 զինվորականներ, որոնք Հյուսիսատլանտյան դաշինքի «Համագործակցություն հանուն խաղաղության» (*Partnership for Peace*, *PfP*) ծրագրի շրջանակներում 2005թ. պետք է ձեռնամուխ լինեին Վրաստանում անցկացված «Վարժեցրու և զինիր» ծրագրի նմանությամբ զորավարժանքների իրականացմանն ադրբեջանական զինվորականության նկատմամբ¹ [12, 13]: Ամերիկյան աղբյուրները նշում են, որ իրականում այդ ծրագիրն ընդգրկում է ուսումնավարժական երկու կենտրոններ՝ մյուսը Բաքվի մոտ² [6]:

Ադրբեջանում ամերիկյան ռազմական ներկայության ընդլայնման հիմնական միջոց է, սակայն, «*Caspian Guard*» ծրագիրը, որը, հենակետ ընտրելով Ադրբեջանը, տարածվել է նաև Ղազախստանում և Թուրքմենստանում³:

Ըստ որոշ տեղեկությունների՝ «*Caspian Guard*» ծրագիրը Պենտագոնում մշակվել էր դեռևս 2001թ. փետրվարին: Ամերիկյան աղբյուրները նշում են, որ 2001թ. հունիսին «*Caspian Guard*»-ը՝ որպես «Կասպիցում անվտանգության ապահովման» հայեցակարգային մոտեցում, իր արտացոլումն էր գտել անվտանգության բնագավառում արտերկրին ամերիկյան աջակցության 2004-2009թթ. բյուջեում [11, 15]: Ներկայում հայտնի է, որ 2005-2011թթ. ընթացքում ԱՄՆ-ը «*Caspian Guard*» ծրագրի իրականացման համար նախատեսում է ծախսել \$130 մլն⁴, որից միայն \$90 մլն-ն՝ ադրբեջանական կողմի համար: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Ադրբեջանում և Ղազախստանում հիմնել հրամանատարական-վերահսկողական կետեր՝ ԱՄՆ Ներքին անվտանգության նախարարության (*The Homeland Security*

¹ Ըստ էության, այդ նախաձեռնության շրջանակներում նախատեսվում է ծրագրի միջոցով անցկացնել ադրբեջանական զինված ուժերի (ներառյալ սահմանապահ զորամիավորումների) մոտ 400 սպաների վերապատրաստում, ինչն իր հերթին առնչություն ունի «*Caspian Guard*» ծրագրի հետ [11]:

² Ենթադրվում է, որ խոսքը Բաքվի մոտ գտնվող Գարաբեյլաթե բնակավայրի հարևանությամբ առկա ադրբեջանական ՊՆ ուսումնավարժական կենտրոնի մասին է [13]: Այստեղ 2004թ. սեպտեմբերի 14-16-ը ՆԱՏՕ «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում պետք է կայանային «Լավագույն համատեղ ջանք-2004» (*Cooperative Best Effort-2004*) զորավարժությունները: Դրանք 2004թ. սեպտեմբերի 13-ին ՆԱՏՕ զորքերի գլխավոր հրամանատար, ամերիկյան զեներալ Ջեյմս Ջոնսի կողմից չեղյալ հայտարարվեցին, այն բանից հետո, երբ պաշտոնական Բաքուն անգոր գտնվեց ապահովել հայ սպաների մասնակցությունը:

³ Չնայած Թուրքմենստանը պաշտոնապես ընդգրկված չէ «*Caspian Guard*»-ում, սակայն ամերիկյան կողմն աջակցում է Կասպիցում առկա թուրքմենական ռազմածովային ուժերի կայացմանը և իրականացնում Թուրքմենստանի առափնյա պաշտպանության ուժերի վարժանքը [14, 22, 26-28]:

⁴ Թեև 2005թ. սեպտեմբերին «*France Press*» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռինո Հարնիշը նշում է \$135 մլն-ի մասին և ավելացնում, որ Ադրբեջանի առափնյա պաշտպանության բարելավման համար ամերիկյան կողմն արդեն իսկ ծախսել է մոտ \$30 մլն [2, 3]:

Department) համապատասխան կենտրոնների նմանությամբ¹, օդային և ծովային հատուկ գործողությունների իրականացումն ապահովող կառույցներ, վարժեցնել ադրբեջանական սահմանապահ ծառայության մոտ 400 սպաների [17]: Բացի այդ, նախատեսվում է Բաքվի մոտ հիմնել ռազմածովային ուժերի հրամանատարական-վերահսկողական «ժամանակավոր» կենտրոն², որն ուղղակիորեն ենթարկվելու է ԱՄՆ ռազմուժի եվրոպական հրամանատարությանը (շտաբը գտնվում է Գերմանիայի Շտուտգարտ քաղաքում) [6, 11, 17, 19]: Դրա աշխատանքները կոորդինացվելու են Ադրբեջանի Աստարայի (Իրանի սահմանին մոտ) և Խիզայի (Բաքվից հյուսիս-արևմուտք) շրջաններում արդեն իսկ տեղակայված³ և 2006թ. առնվազն ևս երկու վայրերում բացվող ռադիոտեղորոշիչ կայանների հետ⁴: Այդ կայաններ-

¹ Այդ հանգամանքը պատահական չէ, քանի որ «*Caspian Guard*»-ում իրենց շոշափելի ներկայությունն ունեն ԱՄՆ Ներքին անվտանգության նախարարության Առափնյա պաշտպանության ծառայության Միջազգային կապերի վարչության Վարժանքի և տեխնիկական աջակցության բաժնի (*Coast Guard's International Affairs Training and Technical Assistant Division of The Homeland Security Department*) աշխատակիցները [16]:

² Որոշ աղբյուրների համաձայն, խոսքը Բաքվի շրջանում գտնվող Ալյաթ բնակավայրում տեղակայված գործառնական մասին է, ուր պետք է զետեղվի ռազմածովային ուժերի հրամանատարական-վերահսկողական կենտրոնը՝ բաղկացած 350 սպաներից [11]: Չի բացառվում, որ Ալյաթում առկա կենտրոնն իրականացնելու է Ադրբեջանում ամերիկյան բոլոր տեսակի զորամիավորումների համակարգող-կառավարող շտաբի գործառնականությունը (ուշագրավ է, որ Ալյաթը գտնվում է ԲԹՁ նավթամուղի սկզբնամասը համարվող Սան-գաչալի տերմինալի գրեթե հարևանությամբ): Նույն աղբյուրների մատուցմամբ, շտաբն իր մասնաճյուղն է ունենալու Բաքվում գտնվող Ադրբեջանի ռազմածովային ուժերի հրամանատարական կենտրոնում: Ենթաշտաբի օգտագործմանն է տրամադրվելու «*AEI-759*» տեսակի ռադիոտեղորոշիչ համակարգը [11]: Նշենք, որ դեռևս 2004թ. ապրիլին հայտնի էր դարձել, թե ամերիկյան «*Motorola*» ընկերությունը Ապշերոնյան թերակղզում՝ Բաքու քաղաք և հարակից շրջաններ, հաջորդ կես տարում պետք է տեղափակեր «*Dimetra TETRA*» անվամբ ռադիոցանց, որը հատուկ կապի հնարավորություն էր ընձեռնելու ադրբեջանական հատուկ ծառայություններին և պետական այլ հաստատություններին [18]:

³ Աղբյուրների մի մասը նշում է, որ Աստարայի և Խիզայի շրջաններում տեղակայված ռադիոտեղորոշիչ կայաններն ամերիկյան «*Lockheed Martin*» ընկերության արտադրած «*AN/FPS-117*» տեսակի կայաններ են՝ թոչնդ օբյեկտները միջինը 340կմ շառավղով հայտնաբերելու ունակությամբ, իսկ մյուս մասի հավաստմամբ իրականում տեղակայվել են եվրոպական «*EADS*» կորպորացիայի արտադրած «*TRML-3D*» կայաններ՝ թոչնդ օբյեկտներն առավելագույնը 200կմ շառավղով հայտնաբերելու ունակությամբ [2, 3, 8, 12, 13, 20]:

⁴ 2006թ. հունվարին հայտնի դարձավ, որ ամերիկյան ռազմուժի եվրոպական հրամանատարության (*EUCCOM*) մասնագետներն արդեն իսկ ուսումնասիրել են Ադրբեջանի Լերիկի (սահմանակից է Իրանին) և Ադստաֆայի (սահմանակից է Հայաստանին) շրջաններում դեռևս խորհրդային ժամանակներից առկա ռադիոտեղորոշիչ կայանն ու ռադիոհեռախոսային հետևման կայանը, որոնք ենթակա են արդիականացման ամերիկացիների կողմից՝ Հարավային Կովկասում ռադիոտեղորոշիչ կայանների և էլեկտրոնային հետախուզության այլ միավորների «*Caucasus Net*» համակարգի մեջ մտնելու համար: Որոշ աղբյուրներ նշում են, որ ներկայում ամերիկյան ռազմական գերատեսչությունը ծրագրում է ռադիոտեղորոշիչ երեք կայաններ հիմնել Վրաստանում և էլ ավելի ընդլայնել Ադրբեջանում առկա կայանների քանակը: Պետք է ենթադրել, որ խոսքը Նախիջևանում նմանատիպ կայանի կամ կայանների հիմնման մասին է: Եվս մեկ ուշագրավ հանգամանք. համաձայն մի քանի հրապարակումների, Պենտագոնը նպատակ ունի մինչև 2015թ. Վրաստանում ու Ադրբեջանում գործածության մեջ դնել «*Caucasus Net*» համակարգը (նմանատիպ մի համակարգ բայթյան երեք երկրներում՝ Բելառուսիա, Լատվիա, Լիտվա, գործում է 2000թ.), որի բաղկացուցիչ մասն են կազմելու Վրաստանի ու Ադրբեջանի օդային տարածքներով կանոնավոր թռիչքներ կատարող ամերիկյան «*A WACS*» հետախուզական իրնաթիռները («*A WACS*»-ները կարող են թռիչքի ժամանակ 360 աստիճան կտրվածքով հետախուզել 320կմ շառավղով տարածքը) [2, 3, 21]: Չպետք է բացառել, որ Ադրբեջանում ամերիկյան ռադիոտեղորոշիչ կայանների ստեղծմանը կարող է հաջորդել հակաօդային ժամանակակից համակարգի հիմնումը, որը հեռանկարում, իր հակահրթիռային հարվածային միջոցներով հանդերձ, կարող է մտնել ԱՄՆ հակահրթիռային պաշտպանության գլոբալ համակարգի մեջ՝ որպես պաշտպանության առաջին մակարդակի համար նախատեսված տարր:

րը, փաստորեն, միտված են անմիջական վերահսկողություն իրականացնելու Կասպից ծովի զգալի հատվածի, Ռուսաստանի հյուսիսկովկասյան տարածքների, ինչպես նաև Իրանի հյուսիսային շրջանների նկատմամբ¹:

«Caspian Guard»-ի մյուս բաղկացուցիչը Ղազախստանում իրականացվող ծրագրերն են: Ադրբեջանի օրինակով այնտեղ նույնպես նախատեսվում է Կասպիցի դազախական հատվածի առափնյա շրջաններում տեղակայել ռադիոտեղորոշիչ կայաններ (տե՛ս Ղազախստանում ԱՄՆ դեսպան Ջոն Օրդուեյի հայտարարությունը [24, 25]): Ղազախական ռազմածովային ուժերի (ՌԾՌԻ) և առափնյա պաշտպանության ուժերի սպաների համար նախատեսվում է անցկացնել ուսումնավարժական տարաբնույթ ծրագրեր և ֆինանսական ու ռազմատեխնիկական աջակցություն ցուցաբերել Կասպիցում դազախական ռազմական նավատորմի կայացմանն ու հզորացմանը²:

Թուրքմենստանը նույնպես դուրս չի մնացել ամերիկյան ուշադրությունից. այդ երկիրը Պենտագոնի ուշադրության կենտրոնում է միաժամա-

¹ Ամերիկյան աղբյուրների ներկայացմամբ, 2006թ. «Caspian Guard» ծրագրի շրջանակներում Ադրբեջանին ԱՄՆ կողմից ցուցաբերված օգնությունը հիմնականում ուղղվելու է ադրբեջանական ռազմածովային ուժերի արդիականացմանը և հզորացմանը: Նշենք, որ դեռևս 2000թ. ամերիկյան կողմը Ադրբեջանի ՌԾՌ-ին էր փոխանցել առափնյա պաշտպանության երկու ռազմանավակներ, որոնց 2003թ. սեպտեմբերի 20-ին միացավ «Point Brower» 27 մետր երկարությամբ առափնյա պաշտպանության ռազմանավակը (ադրբեջանական կողմն այն վերանվանել է «S-201»): Ըստ որոշ տեղեկությունների ամերիկյան կողմը նախատեսում է առաջիկայում Ադրբեջանին փոխանցել ևս երեք ռազմանավակ, նոր հիդրոտեղորոշիչ կայաններ (այդ կայանները նախատեսված են ստորջրյա շարժվող օբյեկտների ուղղությունը, խորությունը, արագությունը և կայանից նրանց գտնվելու հեռավորությունը որոշելու համար), արդիականացնել ադրբեջանական ՌԾՌ-ի ծովային հենակետերում առկա ռադիոտեղորոշիչ կայանները, ինչպես նաև Բաքվին հանձնել փոքր ջրատարողությամբ սուզանավեր, որոնք պետք է պաշտպանեն Կասպիցի ադրբեջանական մասում գտնվող նավթագազային հանքերը, օրինակ իրանական ստորջրյա ուժերի հարձակումներից: Ադրբեջանին փոքր ջրատարողությամբ սուզանավերի հավանական մատակարարման առումով պետք է ուշադրություն դարձնել գերմանական «206A» տեսակի 500 տոննա ջրածավալով սուզանավերին, որոնք համարվում են աշխարհում հարվածային ամենափոքր սուզանավերը և կարող են գործել անգամ 20 մետր խորության պայմաններում: Ռազմական ոլորտում Գերմանիայի հետ Ադրբեջանը հաստատել է համագործակցություն. գերմանական ՊՆ ուսհաստատություններում սովորում են ադրբեջանցի սպաներ, բացի այդ, հայտնի է, որ Բեռլինը որոշակի փորձ ունի կասպյան երկրներին ցուցաբերվող ռազմատեխնիկական աջակցության գործում. ժամանակին ամերիկյան կողմի հետ միասին Գերմանիան Ղազախստանին է փոխանցել առափնյա պաշտպանության 10 ռազմանավակներ [3, 15, 20, 22, 23, 36]:

² Ղազախստանը համեմատաբար ուշ ձեռնամուխ եղավ սեփական ՌԾՌ ձևավորմանը՝ դազախական ՌԾՌ-ի ստեղծման մասին հրամանագիրն այդ երկրի նախագահ Նազարբաևը ստորագրել է 2003թ. մայիսի 7-ին: Նույն 2003թ. ամռանից ԱՄՆ-ը սկսեց Ղազախստանի նավթային մայրաքաղաք համարվող Աթիրաու նավահանգստային քաղաքում ռազմածովային բազայի շինարարության ֆինանսավորումը: 2004թ. հունվարի 1-ից մեկնարկեց Կասպիցի դազախական առափնյա հատվածի պաշտպանական համակարգերի արդիականացման ամերիկյան ծրագիրը: Հայտնի է, որ ամերիկյան կողմն Աստանային է փոխանցել «Dauntless» և «Guardian» տեսակի վեց ռազմանավակներ, 2005թ. ապրիլի տվյալներով՝ պետք է փոխանցեր հազար տոննա ջրածավալով ևս մեկ ռազմանավ: Բացի այդ, ըստ որոշ տեղեկությունների Աստանային պետք է հանձնվեն «Huey-2» տեսակի հինգ ուղղաթիռներ (2003թ. մայիսին հանձնվել է առաջին «Huey-2»-ը) և «C-130» տրանսպորտային մեկ ինքնաթիռ: Ընդհանուր առմամբ, դազախական ՌԾՌ-ը զարգացման ծրագիրը նախատեսում է Աթիրաու, Աքթաու (նախկինում՝ Շնչենկո), Բաուտինո և Քուրյակ (նախկինում՝ Երալինո) նավահանգիստներում ստեղծել բազաներ, որոնց մեջ զլխավորը հանդիսանալու է Քուրյակի բազան [22, 26-34]:

նակ թե՛ կենտրոնաասիական¹, թե՛ կասպյան զարգացումների համատեքստում: Ամերիկյան կողմը թուրքմենական առափնյա պաշտպանության ուժերի համար անցկացնում է ուսումնավարժական ծրագիր² և «Արտահանվող վերահսկողություն ու սահմանների անվտանգություն» ծրագրի շրջանակներում տեխնիկական սպասարկման աջակցություն է ցուցաբերում թուրքմենական ՌԾՈՒ-ին³ [22, 26-28, 34, 37]:

Այսպիսով, Կասպյան ավազանի երկրներին ռազմական աջակցություն ցուցաբերելիս Վաշինգտոնը նվազեցնում է այդ երկրների Ռուսաստանից ունեցած կախվածությունը: Երկրորդ՝ այդ երկրների պաշտպանական համակարգերում ստեղծում և ընդլայնում է ամերիկյան նյութատեխնիկական բազան: Եվ վերջապես՝ քաղաքական, իսկ հետո նաև տնտեսական առումներով նոր հարթություն է տեղափոխում Կասպյան ավազանի տվյալ երկրների հետ Միացյալ Նահանգների հարաբերությունները: Այդ բոլորի հանրագումարն ամերիկյան ազդեցության աճն է տարածաշրջանում:

Ռուսաստանի նախագիծը

Կասպյան ավազանում ամերիկյան ռազմաքաղաքական ներկայության հաստատումը և հետագա ընդլայնումը (ի հավելումն տարածաշրջանում արդեն մի քանի տարի գործող արևմտյան տարատեսակ նավթագազային ընկերությունների) Մոսկվայի համար ունեն հստակ ուրվագիծ ունեցող առնվազն երկու իրողություն.

- աշխարհառազմավարական առումով Միացյալ Նահանգներն ավելի է ամրապնդում սեփական նախագծով ձևավորվող Արևելյան Եվրոպա - Սև ծով - Հարավային Կովկաս - Կասպյան ավազան-Կենտրոնական Ասիա շղթան,
- մյուս կողմից՝ տարածաշրջանի էներգակիրների նկատմամբ ամերիկյան ռազմական վերահսկողության հաստատում, ինչը կարող է կրել երկարատև կամ մշտական բնույթ:

Հատկանշական է, որ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ), որը ստեղծված է այդ թվում ամերիկյան ազդեցության ընդլայնման դեմ պայքարի համար, Կասպիցի պարագայում չկարողացավ պահանջված արդյունավետությամբ իրականացնել իր գործառնությունը:

¹ 2005թ. օգոստոս-սեպտեմբերի ռուսական մամուլի տեղեկությունների համաձայն, Պենտագոնը ցանկանում է ուզբեկական «Քարշի-Խանաբադ» ռազմակայանից իր օդուժի մի մասը տեղափոխել թուրքմենական «Մարի-2» (հայտնի է նաև «Հյուսիսային Մարի» անվամբ) ավիաբազա [35]:

² 2005թ. ամռանը թուրքմենական Թուրքմենբաշի (նախկինում՝ Կրասնովոդսկ) նավահանգստում մեկնարկել էր անվտանգության ապահովման ամերիկա-թուրքմենական ուսումնական ծրագիրը [27]:

³ Հայտնի է, որ 2001թ. ԱՄՆ-ը Թուրքմենստանին է փոխանցել «Point Jackson» անվամբ մեկ ռազմանավակ [22, 26]:

Ընդհանուր տպավորությունն այն է, որ Հարավային Կովկաս-Կասպյան ավազան-Կենտրոնական Ասիա եռյակում Կասպիցը դարձել է այն բաղադրամասը, որը կարող է առաջիկայում էականորեն փոխել աշխարհաքաղաքական իրադրությունը Ռուսաստանի համար հարավային ուղղությունում: Այդ հանգամանքը կարող է հետևանքներ ունենալ թե՛ Հարավային Կովկասում (համեմատաբար ավելի շատ), թե՛ Կենտրոնական Ասիայում (համեմատաբար ավելի քիչ):

Հայտնի է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո ավելի քան մեկ տասնամյակ Ռուսաստանը հանդես էր գալիս Կասպիցն ապառազմականացված գոտի տեսնելու դիրքերից, քանի որ ավազանում ռազմական հիմնական ուժը ռուսաստանյան Կասպյան նավատորմն էր: Սակայն Կասպյան ավազան ամերիկյան ռազմական ներթափանցման առաջին նշանների երևան գալու պես Մոսկվան ակտիվորեն ձեռնամուխ եղավ տարածաշրջանում սեփական ռազմուժի հզորացման գործին: Ավելին, իր բոլոր նավատորմերի՝ Խաղաղօվկիանոսյան, Հյուսիսային, Բալթյան, Սևծովյան և Կասպյան, շարքում վերջինիս վերազինմանն ու արդիականացմանը տրվեց առաջնային բնույթ:

2002թ. հուլիսին շարք մտավ Կասպյան նավատորմի հրամանատարական նոր նավը՝ «Гепард» տեսակի «Татарстан» ֆրեգատը¹: Նույն տեսակի «Дагестан» ֆրեգատը նախատեսվում է ջուրն իջեցնել 2007թ. [38, 40, 41]:

2006-2015թթ. ընթացքում նախատեսվում է ռուսական Կասպյան նավատորմը համալրել «գետ-ծով» տեսակի («Буян») 10 հատ հրանոթային նավերով² [40, 41]: Այդ շարքի առաջին նավը՝ «Астрахань»-ը, ծառայության է անցնելու 2006թ., երկրորդը՝ «Каспийск»-ը, 2007թ.³ [44, 45]:

Ըստ որոշ տեղեկությունների՝ վերջին երեք տարիներին համալրվել է նաև Կասպյան նավատորմի օդուժը՝ «Ми-8», «Ми-24», «Ка-25», «Ка-27» և «Ка-29» տեսակի ուղղաթիռներով, ինչպես նաև «Су-24» ու «Су-25» ռազմական ինքնաթիռներով⁴: Օդուժին զուգահեռ՝ «С-300» համալիրներով ուժեղացվել է նաև շրջանի հակաօդային պաշտպանության համակարգը: 2005թ. նոյեմբերին Ռուսաստանի ՌԾՈւ հրամանատար, ծովակալ Վլադիմիր Մատրինի ներկայացմամբ, առաջիկայում Կասպյան շրջանը պետք է զինվի առափնյա պաշտպանության հրանոթային նոր համալիրներով [26, 33, 46]:

¹ «Татарстан» ֆրեգատը զինված է «Уран» տիպի 8 թևավոր հրթիռներով, «Оса» տիպի զենիթային 20 հրթիռներով, 76.2 մմ-ոց հրանոթային ունիվերսալ 1 համակարգով, մոտ տարածության համար նախեսված 30 մմ-ոց զենիթահրանոթային 2 համակարգերով, ինչպես նաև գնդացրային զենքերով, ձեռքի նռնականետերով և հակադիվերսիոն սարքավորումներով: «Татарстан»-ը կարող է ընդունել և օդ բարձրացնել ուղղաթիռ: Ֆրեգատի անձնակազմը մոտ 100 հոգի է [38, 39]:

² Նախատեսվում է մինչև 2010թ. ջուրն իջեցնել այդ տեսակի առաջին հինգ նավերը [41, 42]:

³ 500 տոննա ջրածավալով, 62մ երկարությամբ ու 9.6մ լայնությամբ այդ ռազմանավերը կառուցվում են «Stealth» տեխնոլոգիայի հիման վրա և զինված են լինելու հրանոթային հուժկու համակարգերով [43, 44]:

⁴ Ռուսաստանյան աղբյուրների մատուցմամբ, Ռուսաստանի Կասպյան նավատորմի օդուժը բաղկացած է մարտական 20 ինքնաթիռներից և 18 ուղղաթիռներից [26]:

2005թ. հուլիսին պաշտոնական Մոսկվան հայտարարեց, որ երկու տարվա ընթացքում Կասպիցն առաջնահերթ կարգով մտնելու է «գլոբալ վերահսկողության և իրավիճակի արտացոլման ազգային համակարգի մեջ»¹, որի գործառնությունն է ստորջրյա, վերջրյա և օդային վերահսկողության իրականացումն ու անհրաժեշտության դեպքում՝ Ռուսաստանի ՊՆ, ՆԳՆ և Անվտանգության դաշնային ծառայության (ԱԴԾ) համապատասխան կառույցների համալիր փոխգործակցության ապահովումը [47]:

Նույն՝ 2005թ. հուլիսին Ռուսաստանը հայտարարեց, թե իր հարավային սահմանների դազախական, կասպյան ու կովկասյան հատվածների ամրապնդման, այդ հատվածներում ժամանակակից սահմանապահ կառույցների հիմնման համար ծախսելու է ավելի քան \$2.3 մլրդ [48]:

Ջուտ ռազմական բնույթի ջանքերից զատ՝ Կասպիցում ռուսական նախաձեռնությունների առանցքը դարձավ ավազանում ռազմաքաղաքական հարթության համագործակցության հիմնումը, ընդ որում՝ հնարավորինս ինստիտուցիոնալացված ձևով:

Մոսկվայի նման նախաձեռնության մասին առաջին լուրն ի հայտ եկավ 2005թ. ապրիլի 12-ին Բաքու ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի կատարած այցից հետո: Քիչ ավելի ուշ՝ 2005թ. ապրիլի վերջերին, հայտնի դարձավ, որ Ռուսաստանի ՊՆ Միջազգային ռազմական համագործակցության գլխավոր վարչությունում ռուսաստանյան ԱԳՆ աշխատակիցների մասնակցությամբ ընթանում են Կասպիցում արագ արձագանքման համատեղ ուժերի կառուցվածքի նախագծի մշակման աշխատանքներ: Արդեն 2005թ. սեպտեմբերին Մոսկվան Կասպյան ավազանի հինգ երկրների (Ռուսաստան, Ղազախստան, Թուրքմենստան, Իրան, Ադրբեջան) ուժերից բաղկացած օպերատիվ հակազդման ռազմածովային համատեղ խմբավորման («Կասֆոր») ստեղծման մասին համաձայնագրի նախագիծը հանձնել էր ավազանի մյուս բոլոր երկրներին [28, 49-51]:

Ներկայում հայտնի է, որ «Կասֆորի» գաղափարին կողմ են արտահայտվել Ղազախստանն ու Իրանը: Ըստ էության, առայժմ այն անընդունելի է Ադրբեջանի² և Թուրքմենստանի համար:

Ակնհայտ է, որ Մոսկվան փորձում է Կասպիցում աշխարհաքաղաքական նոր նախագծի միջոցով առնվազն սահմանափակել ամերիկյան ռազ-

¹ Ռուսաստանի խաղաղօվկիանոսյան ուղղությունն այդ համակարգի մեջ է 2003-ից [47]:

² Թեև սույն թվականի հունվարի 24-ին Բաքվում եղած ժամանակ Ռուսաստանի պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովը, փաստորեն, պաշտոնապես առաջարկել էր Բաքվին անդամակցել «Կասֆորին», սակայն ադրբեջանական կողմը՝ այդ երկրի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևի ներկայացմամբ, նախ կարևորել էր Կասպիցի բաժանման հետ կապված բոլոր հարցերի կարգավորումը՝ ըստ էության, ներկա փուլում մերժելով ռուսական առաջարկությունը [20, 50]:

մաքաղաքական ներթափանցումը Կասպյան ավազան:

Երկրորդ՝ ռուս-իրանական միջուկային (Բուշեհրի ատոմակայան) և ռազմատեխնիկական համագործակցությանը «Կասֆորի» միջոցով գալիս է գումարվելու ռազմաքաղաքական ինստիտուցիոնալացված փոխգործակցությունը: Փոխգործակցության այդ նոր տարրը ոչ միայն կարող է հանդիսանալ նախորդ երկու բաղադրամասերի տրամաբանական շարունակությունը, այլև որակական նոր հարթություն տեղափոխել Մոսկվա-Թեհրան կապը (չնայած Կասպիցի բաժանման խնդրում և միջազգային մի շարք այլ հարցերում առկա ռուս-իրանական որոշ հակասություններին):

Իրանական գործոնը

Միջազգային համակարգում «իրանական հարցը» ձեռք է բերել միջնաժամկետ նշանակության հերթական փոփոխություններն արտացոլող առաջնային գործոնի կարգավիճակ: Ուժերի տարածաշրջանային փոխդասավորվածության վրա ներազդելուց բացի՝ այն ունի նաև գլոբալ իմաստ և այդ առումով «Հարավսլավիա (1999թ.) - Աֆղանստան (2001թ.) - Իրաք (2003թ.) - Ուկրաինա (2004թ.)» շղթայի մյուս տարրն է:

Իրանական հարցի «կարգավորումը» ամերիկյան աշխարհաքաղաքականության համար խնդիրներ է լուծում թե՛ գլոբալ, թե՛ տարածաշրջանային հարթություններում:

Պատահական չէ, որ 2006թ. «ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարությունում» Իրանը նշված է որպես Միացյալ Նահանգներին մարտահրավեր նետող առաջնային երկիր:

Տարածաշրջանային առումով «իրանական հարցն» իր անմիջական ազդեցությունն է թողնում միանգամից չորս հատվածներում՝ Մերձավոր Արևելք, Հարավային Կովկաս, Կասպյան ավազան և Կենտրոնական Ասիա: Հետևաբար, Վաշինգտոնի որոշումը՝ տեղեկատվական-հոգեբանական և դիվանագիտական ընդհանուր ճնշումից բացի, աշխարհաքաղաքական հնարավորինս ամուր օղակի մեջ վերցնել Իրանը, իր ենթակառուցվածքային տարածումն է ունենում հենց այդ հատվածներում:

Ռուսաստանի և Չինաստանի համար խնդիրը, գլոբալ բնույթ կրող աշխարհաքաղաքական և տնտեսական հարթություններից բացի, ունի տարածաշրջանային նշանակություն:

Մոսկվայի պարագայում վարչակարգի փոփոխությունը Թեհրանում նշանակում է Հարավային Կովկասի, Կասպիցի ու Կենտրոնական Ասիայի

ուղղություններով կարևոր գործընկերոջ կորուստ: Այդ հանգամանքը կարող է բացասաբար ազդել հյուսիս-հարավ նախագծերի վրա: Հեռանկարային առումով նման իրադրությունն ի վիճակի է թուլացնել այդ տարածաշրջանների ընդհանուր փոխկապվածությունը Ռուսաստանի հետ:

Իր հերթին, իրանական կողմի համար էական նշանակություն են ձեռք բերել հատկապես սահմանակից երկրներում ամերիկյան ենթակառուցվածքների ստեղծման խոչընդոտումն ու սեփական ներկայության ամրապնդումը: Այդ առումով դասական օրինակ կարող է ծառայել Իրաքը: Անշուշտ, նշված տրամաբանությանն է ենթարկվում նաև 2005թ. մայիսի 16-ին Իրանի ու Ադրբեջանի միջև կնքված «Չհարձակման պակտը», ինչպես նաև իրանա-ադրբեջանական ու իրանա-հայկական հարաբերությունների ընդհանուր խորացմանն ուղղված Թեհրանի ջանքերը¹ [54]:

Պետք է ենթադրել, որ այս փուլում (2006թ. գարուն-աշուն) Վաշինգտոնը Թեհրանի նկատմամբ կիրառվող տեղեկատվական ու դիվանագիտական ընդհանուր ճնշումից և Իրանի շուրջ ռազմաքաղաքական ենթակառուցվածքների ձևավորումից այն կողմ չի անցնի²: 2006թ. նոյեմբերին կայանալիք Կոնգրեսի միջանկյալ ընտրություններից առաջ Իրանի դեմ լայնամասշտաբ ցամաքային գործողությունները, որոնց արդյունքում ամերիկյան ռազմուժը կկրի մարդկային կորուստներ, բացասաբար կանդրադառնան Բուշ-կրտսերի³ և հանրապետականների վարկանիշի վրա:

Մյուս կողմից՝ զուտ օդային և հատուկ նշանակության գործողություններով անհնար է փոխել Իրանի ներկայիս քաղաքական համակարգը, վերահսկողություն սահմանել իրանական նավթահանքերի նկատմամբ ու Օրմուզի նեղուցով Պարսից ծոցից արտահանվող նավթի անխափան

¹ Այդ ջանքերի մեջ զգալի տեղ է հատկացված իրանական էներգետիկ քաղաքականությանը: 2005թ. դեկտեմբերի 20-ին Նախիջևանում Մահմուդ Ահմադինեժադի ու Իլհամ Ալիևի մասնակցությամբ տեղի ունեցավ Իրան-Նախիջևան գազատարի բացումը: Շինարարության փուլում է Իրան-Հայաստան գազատարը: Բացի այդ, ուշագրավ էր փետրվարի 14-ին Երևանում Իրանի արտգործնախարար Մանուշեհր Մոթաքիի հայտարարությունը՝ կապված երկու երկրների միջև երկաթգծային հաղորդակցության վերականգնման հետ [52, 53]:

² Ըստ էության, Բուշ-կրտսերի վարչակազմն «իրանական հարցը» վերածել է ԱՄՆ արտաքին քաղաքականությանն առնչվող նախընտրական առաջնային թեմայի՝ չեզոքացնելու համար «իրաքյան թեմայի» բացասական էֆեկտը: Նաև այս առումով պետք է դիտարկել ԱՄՆ Սպիտակ տան հանրապետական վարչակազմի նախաձեռնությունը՝ մեծացնել տեղեկատվական ակտիվություն իրանական հարցի շուրջ:

³ Ամերիկյան *CNN* հեռուստաընկերության և «*USA Today*» օրաթերթի պատվերով «*Gallup*» կազմակերպության կողմից 2006թ. մարտի 10-12-ն անցկացված սոցիոլոգիական հարցումների համաձայն, ԱՄՆ նախագահի պաշտոնում Ջորջ Բուշ-կրտսերի գործունեությանը հավանություն է տվել հարցվածների միայն 36%-ը, ինչը մեկ տոկոսով պակաս է 2005թ. նոյեմբերի ցուցանիշից: Բուշ-կրտսերի նախագահության ողջ ընթացքում այդ ցուցանիշը հասել է ռեկորդային ցածր մակարդակի: Հարցվածների 67%-ի կարծիքով (ամենաբարձր ցուցանիշը 2003թ. մարտին սկսված իրաքյան կամպանիայից ի վեր) Սպիտակ տունն Իրաքում իրավիճակը շտկելու հստակ ծրագիր չունի [55]:

առաքման ապահովումը¹:

Ընդհանուր առմամբ, առնվազն կարճատև ժամանակահատվածի կտրվածքով իրանական հարցը միջազգային ճարտարապետության աշխարհաքաղաքական ամենակատիվ մատրիցաներից մեկի² կենտրոնական բաղադրատարրն է, որով էլ մի մեծ մասով պայմանավորված է այդ մատրիցայի գործառնական համակարգի տրամաբանությունը:

2. Լեռնային Ղարաբաղի խնդիրը աշխարհաքաղաքական տիրություն

Վաշինգտոնի պատկերացմամբ, սեփական աշխարհաքաղաքական ու աշխարհատեսական նախագծերի անխափան գործառնության համար անհրաժեշտ են նոր իրողություններին համապատասխան տարածաշրջանային ինտեգրացիոն կառույցներ, որոնք պետք է ինստիտուցիոնալացնեն առաջիկա փոխդասավորվածությունը: Այդ առումով հայ-ադրբեջանական հակամարտությունը խոչընդոտ է տարածաշրջանի նոր համակարգի ձևավորմանը:

Այսօր Հարավային Կովկասում Ղարաբաղյան հակամարտությունը հանդիսանում է այն առաջնային գործոններից մեկը, որը համակարգային առումով կարող է ապակայունացնել ողջ տարածաշրջանը:

Մյուս կողմից՝ իրադրության փոփոխությունը Ղարաբաղյան խնդրում ի վիճակի է ազդեցություն ունենալ հայ-թուրքական հարաբերությունների վրա: Այդ հարաբերությունների վերականգնումը կարող է դրական հետևանքներ ունենալ Հարավային Կովկասում ԱՄՆ ինտեգրացիոն ծրագրե-

¹ Որոշ հաշվարկների համաձայն, եթե Իրանի դեմ ռազմական գործողությունների արդյունքում Պարսից ծոցը Հնդկական օվկիանոսին կապող Օրմուզի նեղուցը ներկայում փակվի երեք ամսով, ապա Միացյալ Նահանգներին այն կարող է արժենալ համախառն ներքին արդյունքի 4-5%-ի անկում և գործազրկության աճ 2%-ով: Ճիշտ է, Իրանի դեպքում նավթի արտահանման (որի հիմնական քանակն անցնում է Օրմուզի նեղուցով) դադարեցումը կարող է ունենալ տնտեսական ավելի մեծ հետևանքներ, քանի որ իրանական արտահանման մոտ 80%-ը կազմում է նավթը (2005թ. վերջի տվյալներով՝ Իրանն օրական արդյունահանում էր գրեթե 4 մլն բարել նավթ (1 բարել = 159 լիտր), արտահանում՝ 2.5 մլն բարել), և նավթի վաճառքից ստացված եկամուտները կազմում են իրանական մոտ \$60 միլիարդանոց պետական բյուջեի եկամուտների կեսը, սակայն խնդիրներ ունեցող ամերիկյան տնտեսության համար կարող է անհաղթահարելի լինել նավթի միջազգային շուկայում սև ոսկու մեկ բարելի դիմաց \$100 գինը: Նախնական հաշվարկների համաձայն՝ կպահանջվի մոտ \$2 մլրդ Պարսից ծոցում առկա նավթահանքերից դեպի Մաուդյան Արաբիայի՝ Կարմիր ծովի ափ տանող նոր նավթամուղերի կառուցման համար, որից հետո՝ Իրանի դեմ ռազմական գործողությունների սկսման դեպքում, Պարսից ծոցի նավթը մի մեծ մասով կշարունակի հոսել դեպի արևմտյան շուկաներ: Այդ պարագայում, օրինակ, Իրանի նկատմամբ ռազմական գործողությունների արդյունքում Օրմուզի նեղուցի փակվելը (նույն երեք ամսով) Միացյալ Նահանգներին կարող է արժենալ համախառն ներքին արդյունքի ընդամենը 1%-ի անկում և գործազրկության անհամեմատ ավելի փոքր աճ: Հետևությունն այն է, որ Պարսից ծոցից էներգակիրների տեղափոխման վիճակը և, հետևաբար, նավթի միջազգային գները կարող են հանդես գալ որպես Իրանի դեմ ռազմական գործողությունների հավանական սկսման ցուցիչ [56]:

² Նկատի ունենք Մերձավոր Արևելք-Սև ծով-Հարավային Կովկաս-Կասպյան ավազան-Կենտրոնական Ասիա հատվածը:

րի հարցում¹:

Ի հավելումն՝ ամերիկյան մոդելի իրականացումը հնարավորություն կընձեռնի Վաշինգտոնին վերահսկողություն սահմանել հայ-իրանական ու ադրբեջանա-իրանական հարաբերությունների նկատմամբ՝ շարունակելով իսլամական հանրապետության աշխարհաքաղաքական շրջափակման քաղաքականությունը: Հայ-ադրբեջանական հարաբերությունների լարված վիճակը, Վաշինգտոնի պատկերացմամբ, հնարավորություն է ընձեռում Թեհրանին իր ազդեցությունը տարածել տարածաշրջանում:

Այսպիսով, ամերիկյան դիվանագիտությունը Հարավային Կովկասում հանդես է գալիս որպես տարածաշրջանային աշխարհաքաղաքական փոխդասավորվածությունը փոխելու առաջնային ազդակ: Այդ հանգամանքն այսօր զգալի չափով ձևավորում է հարավկովկասյան հարաբերությունների ընդհանուր տրամաբանությունը: Ղարաբաղյան բանակցություններն այդ հարաբերությունների կենտրոնական բաղադրատարրն են՝ ստանձնելով հարավկովկասյան փոխդասավորվածության շարժերի ցուցիչի դեր:

Ղարաբաղյան խնդրում ԵՄ-ը այսօր սատարում է ամերիկյան ջանքերին: Նման մոտեցումն, ընդհանուր առմամբ, նախկին Խորհրդային Միության տարածքում ԱՄՆ-ի հետ համատեղ գործելու և Ռուսաստանի ներկայությունը առնվազն սահմանափակելու Բրյուսելի ռազմավարության մաս է կազմում: Վերջինս Հարավային Կովկասը տեսնում է Եվրամիությանը հարակից հատվածներում անվտանգության գոտու սկզբունքով կառուցվող տարածաշրջանների մի ամբողջ շարքի մեջ: Այդ առումով եվրոպական ռազմավարությունը հիմնականում արտահայտված է «Ընդլայնված Եվրոպա. նոր հարևանություն» ծրագրի շրջանակներում:

Հեռանկարային առումով, սակայն, սպասելի է ամերիկա-եվրոպական հակասությունների աճը, մասնավորապես, Հարավային Կովկասում: Այդ են վկայում նաև Վրաստանի և Ուկրաինայի զարգացումները:

Ռուսաստանի քաղաքականության նպատակն է թույլ չտալ հակամարտության *status quo-ի* վերաձևակերպումը: Նման զարգացման դեպքում գերազանցապես եվրոպական (ՆԱՏՕ-ական) երկրների գորամիավորումներից կազմավորված «խաղաղապահների» մուտքը հակամարտության գոտի կարճաժամկետ կտրվածքով Ռուսաստանին զրկում է հետհակամարտային իրավիճակում ազդեցությունից (մարտավարական կորուստ): Իսկ միջին ժամանակահատվածի կտրվածքով Մոսկվան զրկվում է Հարավային Կովկասում ներկա գտնվելու միակ լուրջ կարողությունից՝ Հայաստանի հետ ռազմաքաղաքական հարաբերություններից: Գաղտնիք չէ, որ ի հավելումն

¹ Պատահական չէ, որ ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի ու Եվրասիայի հարցերով օգնական Դենիել Ֆրիդի տարածաշրջանային վերջին այցը (2006թ. մարտի 13-17) ուներ «Ադրբեջան-Վրաստան-Հայաստան-Թուրքիա» ձևաչափը:

թուրքական գործոնի, Ղարաբաղյան տարրը հայ-ռուսական ռազմաքաղաքական պայմանավորվածությունների մյուս կարևորագույն բաղկացուցիչն է:

Հայաստանի հետ ռազմաքաղաքական հարաբերությունների կորստի դեպքում քիչ հավանական է, որ առաջիկայում Ռուսաստանը վերադառնա Հարավային Կովկաս:

Իրանը դեմ է իրադրության փոփոխությանը Ղարաբաղյան հարցում: Թեհրանում նման զարգացումը դիտարկում են որպես ամերիկյան ռազմաքաղաքական ճնշման ուժեղացում իրենց նկատմամբ: Երկարատև ժամանակահատվածի կտրվածքով փոփոխությունները Լեռնային Ղարաբաղի խնդրում և նոր իրավիճակի ի հայտ գալը Հարավային Կովկասում կարող են զգալիորեն կրճատել իրանական աշխարհաքաղաքականության ներկայությունը տարածաշրջանում:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա ԲԹՁ նավթամուղի և ԲԹԷ գազամուղի գործարկումից ու հայ-թուրքական հարաբերությունների վերականգնումից հետո թուրքական ազդեցությունը տարածաշրջանում կարող է, ընդհանուր առմամբ, աճել: Այդ իմաստով փոփոխությունները Լեռնային Ղարաբաղում պետք է որ ձեռնառու լինեն Անկարային:

3. Ղարաբաղյան բանակցային գործընթացի ներկա փուլը. իրավիճակային դիտարկում

Պետք է ենթադրել, որ առնվազն 2005թ. ամռանը սահմանվել էր Լեռնային Ղարաբաղի խնդրի «կարգավորման» ժամանակային վերջնագիծը: Խոսքը վերաբերում է 2006թ. համար օգտագործվող «հնարավորությունների պատուհան» ձևակերպմանը:

Նախաձեռնության շուրջ

Որպես իրավիճակի ապաստեցմանն ուղղված ընդհանուր նախաձեռնություն, տեղեկատվական ապահովման առաջամաս հանդես եկան Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵՄԽՎ) Ղարաբաղի հարցով ենթահանձնաժողովի ղեկավար լորդ Ռասել Ջոնսթոնի 2006թ. հունվարի 9-ին Ստրասբուրգում ներկայացրած զեկույցը (կապված 2005թ. ընթացքում ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության հետ) և ԵԱՀԿ նոր գործող նախագահ, Բելգիայի արտգործնախարար Կարլ դը Գուխտի հայտարարությունները (2006թ. փետրվարին Ռոբերտ Քոչարյանի ու Իլհամ Ալիևի կողմից խաղաղության պայմանագրի հավանական կնքման ու հակամարտության գոտում խաղաղապահ զորամիավորումների հաստատման վերաբերյալ), ինչպես նաև հունվարի 24-26-ը տեղի ունեցած նրա հարավկովկա-

այան այցը [57]:

Տեղեկատվական նախապատրաստման խնդիրներ էին իրագործում ինչ-որ տեղ այդ գործում առաջնությունը ստանձնած «ոչկառավարական»¹ կազմակերպությունները՝ «*International Crisis Group*», «*Eurasia Group*» և «*Jane's Information Group*», որոնց ներկայացուցիչներն էլ հիմնականում տեղեկատվական դաշտ նետեցին հավանական կարգավորման մեխանիզմի հետևյալ դրույթները.

- Հայկական զորամիավորումները դուրս են բերվում ԼՂՀ ազատագրված տարածքներից՝ «անվտանգության գոտուց»,
- այնտեղ տեղակայվում են միջազգային խաղաղապահ զորամիավորումներ, որոնք չպետք է լինեն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների և Հարավային Կովկասին անմիջական հարևան երկրների զորամիավորումներ,
- տեղի է ունենում փախստականների վերադարձ,
- որոշ ժամանակ անց Արցախում պետք է կայանա հանրաքվե, որն էլ կհստակեցնի հանրապետության միջազգային կարգավիճակը [58, 71]:

Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ ներկայացվածը ոչ թե դատողությունների ընդհանուր շարադրանք էր, այլ՝ Արցախի խնդրի «կարգավորման» կոնկրետ նախագիծ-պայմանագրի կետեր², որոնց շուրջ, այդ կազմակերպությունների ներկայացուցիչների հավաստմամբ, Հայաստանի ու Ադրբեջանի համապատասխան պաշտոնյաներն արդեն իսկ տվել էին իրենց համաձայնությունը:

Այդ համատեքստում պետք է դիտարկել նաև փետրվարի 10-11-ը Փարիզից մոտ 40կմ հեռավորության վրա գտնվող Ռամբույե ամրոցում տեղի ունեցած Քոչարյան-Ալիև բանակցություններից առաջ ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսի հեռախոսազանգերը Ադրբեջանի և Հայաստանի նախագահներին [60]:

Ռուսաստանի մտեցումները

Ռուսաստանյան գործոնը կարևորվում է այն առումով, որ վերը ներկայացված ողջ զարգացումներում Մոսկվայի քաղաքականությունը հան-

¹ Արևմտյան դիվանագիտությունների կողմից «ոչկառավարական», վերլուծական կազմակերպությունների ներգրավումը միջազգային հիմնախնդիրներում դեռ կունենա իր շարունակությունը, և այստեղ նկատելի են մեթոդաբանական նմանություններ այլ երկրներում ամերիկյան կամ եվրոպական հովանավորությամբ գործող հասարակական կազմակերպությունների աշխատանքի բնույթի հետ:

² Մասնավորապես, նման ենթադրության կարելի է հանգել նույն անվանումով «*Eurasia Group*» խորհրդատվական ընկերության նախագահ Յան Բրեմերի հայտարարությունից. «Բուշի վարչակազմի մարդկանց հետ իմ խոսակցություններից պարզ է, որ կողմերը շատ մոտ են նախնական համաձայնության կնքմանը: Կարծում եմ, որ պայմանագիրը, փաստորեն, պատրաստ է» [59]:

դեմ էր գալիս որպես ազդեցություն ունեցող միակ այլընտրանքային ուղղություն, ինչն էլ Բաքվին ու Երևանին քաղաքական խուսանավում կատարելու հնարավորություն էր տալիս¹:

Այս տարվա հունվարին Ռուսաստանի դիրքորոշումն արտահայտվեց ավելի որոշակի ձևով՝ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորոդյուժայի և Ռուսաստանի պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովի հայտարարությունների տեսքով:

Հունվարի առաջին կեսին Բորոդյուժան «*Независимое военное обозрение*» թերթին տված հարցազրույցում նշեց, թե ՀԱՊԿ անդամ յուրաքանչյուր երկրի (տվյալ դեպքում նկատի ունենալով Հայաստանը) դեմ ռազմական հարձակումը մեխանիկորեն կդիտարկվի, որպես հարձակում կազմակերպության մյուս անդամների դեմ, ճիշտ է՝ ընդգծելով հավանական հակամարտության նախ քաղաքական կարգավորման անհրաժեշտությունը [61]:

Հունվարի 23-ին պաշտոնական այցով գտնվելով Բաքվում՝ Սերգեյ Իվանովը հայտարարեց, թե Ղարաբաղյան հակամարտության քաղաքական-դիվանագիտական կարգավորումից հետո միայն «կարելի կլինի խոսել խաղաղապահ առաքելության, այդ թվում՝ Ռուսաստանի հավանական մասնակցության մասին»: Ի դեպ, նույն տրամաբանությամբ պետք է դիտարկել Սերգեյ Իվանովի Բաքվում արած մեկ այլ հայտարարություն, թե Ռուսաստանը պատրաստ է զինել և՛ Հայաստանին, և՛ Ադրբեջանին, ինչն անհանգստություն էր առաջացրել Վաշինգտոնում [62]:

Եվ վերջապես, հայկական մամուլում հայտնված լուրերի համաձայն, Ռամբույեի բանակցություններից առաջ կայացել էր Հայաստանի ու Ռուսաստանի նախագահների հեռախոսազրույցը, որի մեծ մասը նվիրված էր Ղարաբաղյան խնդրին [63]:

Դիտարկումներ Ռամբույեից հետո

Ըստ էության, Ռամբույեից առաջ դեռ չէին ձևավորվել այն դիվանագիտական, տեղեկատվական ու հոգեբանական պայմանները, որոնք անհրաժեշտ են խնդրի կարգավորման համար: Այդ առումով Ռամբույե տանող ողջ նախաձեռնությունը, թերևս, որոշակի առումով կրում էր իմիտացիոն բնույթ: Այլապես Ռամբույեից դեռ շատ առաջ և անգամ մինչև 2005թ. ամառը (մինչև հակամարտության հանգուցալուծման համար հստակեցված վերջնաժամկետի հաստատումը) կառաջադրվեք կողմերի միջև առկա շփումների, ինչպես նաև յուրաքանչյուր կողմի ներհասարա-

¹ Անշուշտ, այս դեպքում գոյություն ունի նաև Իրանի գործոնը, սակայն խնդիրը հանգում է միջազգային համակարգում այդ երկրի ունեցած ազդեցությանը, ինչը դժվար է համեմատել Ռուսաստանի կարողությունների հետ:

կական հարաբերությունների հոգեբանական-տեղեկատվական մշակման իրականացման խնդիրը: Բացի այդ, նման նպատակի առկայության պարագայում, թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում մենք ականատես կլինեինք ներհիշխանական, ինչպես նաև իշխանություն-ընդդիմություն փոխգործակցության տրամաբանությունների որոշակի փոխոփոխյանը, ինչը չնկատվեց Ռամբույեից առաջ¹:

Ռամբույեում տեղի ունեցած բանակցությունների գլխավոր արդյունքն այն եղավ, որ ԵԱՀԿ Մինսկի խմբից, փաստորեն, առանձնացավ ամերիկյան դիվանագիտությունը: Ռամբույեի արդյունքները Վաշինգտոնի համար կարծես թե դարձան հարմար փաստարկ՝ հիմնավորելու սեփական միակողմանի քայլերը Ղարաբաղյան հարցում:

Ռամբույեի բանակցություններից հետո Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին հարաբերությունների գերատեսչությունների արտահայտած, ընդհանուր առմամբ, լավատեսության ֆոնին՝ կապված հետագա բանակցությունների հետ, առաջին հերթին առանձնացան եվրոպական ու ամերիկյան ներկայացուցիչների դժգոհությունները: Այդ հանգամանքը՝ ամերիկյան դիվանագիտության ակտիվացման համատեքստում, հետագայում հանգեցրեց պաշտոնական Բաքվի ու Երևանի նկատմամբ ճնշամիջոցների² [65-67]: Այս առումով պետք է հատկապես առանձնացնել տեղեկատվական դաշտում ի հայտ եկած նոր տիպի լարվածությունը³:

Միննույն ժամանակ, ակնհայտ դարձավ, որ Երևանի պես Բաքվում նույնպես համաձայն չէին «խաղաղապահ առաքելության» գաղափարին: Հետևաբար, երկուստեք առաջանում է խուսանավելու հնարավորություն:

Նախագահներ Ռոբերտ Քոչարյանի ու Իլհամ Ալիևի հայտարարությունները պետք է դիտարկել ոչ միայն ԼՂՀ խնդրում հավանական նոր բանակցություններին ընդառաջ՝ սեփական դիրքերն ամրապնդելու փորձ, այլև՝ վերոհիշյալ ճնշամիջոցների ու խուսանավելու համատեքստում:

Լեոնային Ղարաբաղի խնդրի համատեքստում շատ կարևոր են Կոստ-

¹ Հետևությունն այն է, որ խնդրի վերաբերյալ ադրբեջանական կամ հայկական տեղեկատվական դաշտերում նկատվող «որակական» տեղաշարժը կամ տվյալ երկրի քաղաքական ու հասարակական ուժերի միջև առկա փոխգործակցության տրամաբանության փոփոխությունը կարող են ընկալվել որպես Ղարաբաղյան խնդրի կարգավորման գործընթացի՝ իրավիճակը բնութագրող ցուցիչներ:

² Մասնավորապես, նման ենթատեքստով հայտարարություններ արվեցին Եվրամիության (Երևանին ու Բաքվին ուղղված ԵՄ կոչը՝ «նախապատրաստել սեփական ժողովուրդներին հավասարակշռված համաձայնության») և ԱՄՆ (Միացյալ Նահանգների պետքարտուղարի Եվրոպայի ու Եվրասիայի գծով օգնական Դենիել Ֆրիդի հայտարարությունը՝ Վաշինգտոնը «կոչ է անում Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին բաց չթողնել պահը և վերջ տալ Ղարաբաղյան հակամարտությանը», և նրա այցը տարածաշրջան) կողմից [64]:

³ Օրինակ, Ռամբույեից հետո լրահոսքում մի պահ տիրապետող դարձավ այն լուրը, թե Ռամբույեում Հայաստանի նախագահը կիսատ թողնելով բանակցությունները՝ մեկնել է: Այդ տեղեկությունը, Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովի այն հայտարարության հետ, թե փոխհամաձայնություն է ձեռք բերվել բանակցությունների սեղանին առկա ինը կետերից յոթի վերաբերյալ, տեղեկատվական դաշտում, առաջին հերթին, ներկայացվեց որպես հայկական կողմի թուլության նշան [66, 68]:

վոյի շուրջ ընթացող զարգացումները: Հունվարի 31-ին Կոստվոյի հարցով Կոնտակտային խմբի՝ Լոնդոնում կայացած նիստի արդյունքում որոշում է կայացվել արդեն 2006թ. ընթացքում ավարտին հասցնել երկրամասին միջազգային կարգավիճակի շնորհման գործընթացը¹: Այդ առումով հարկ է հիշել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հայտարարությունը, թե Կոստվոյի հարցի լուծումը պետք է կրի ունիվերսալ բնույթ՝ այլ չճանաչված պետություններ նույնպես կարող են ստանալ միջազգային կարգավիճակ: Ենթադրելի է, որ ռուսական դիվանագիտությունը կարող է Ղարաբաղյան խնդրի շուրջ ընթացող բանակցություններում ակտիվ կերպով օգտագործել այդ բանաձևը [70]:

Հետևություններ

«Տրանսեվրասիական նախագծի» շրջանակներում ընթացող աշխարհաքաղաքական վերադասավորումներն իրենց նշանակությամբ կարող են հավասարվել սառը պատերազմի ավարտից ու ԽՍՀՄ փլուզումից հետո Արևելյան Եվրոպայում տեղի ունեցած շարժերին:

Այդ իմաստով Հարավային Կովկասում, Կասպյան ավազանում և Կենտրոնական Ասիայում ընթանում է նոր մեխանիզմների ստեղծման գործընթաց՝ գերազանցապես ամերիկյան ռազմաքաղաքական ներկայության ընդլայնման, աշխարհատնտեսական նախագծերի (էներգակիրներ² և այլն) իրականացման և տարածաշրջանային իրադրության փոփոխման միջոցով:

Ինստիտուցիոնալ առումով շրջանառության մեջ է դրվել «Բալթիկայից մինչև Կասպից ժողովրդավարությունների միության» ստեղծման գաղափարը, և այդ առումով նոր իմաստ է ստացել ՎՈւԱՄ կազմակերպությունը:

Հարավային Կովկասում ամերիկյան քաղաքականության մեջ մուտք է գործել նոր էական տարր՝ այսպես կոչված «Մարշալի պլան Հարավային Կովկասի համար» [72]: Այն, ըստ էության, «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի տեսքով արդեն իսկ իրագործվում է: Այդ հանգամանքը կարող է վկայել տարածաշրջանում ԱՄՆ հովանու ներքո ինտեգրման ինստիտուցիոնալացված կառույցներ ստեղծելու մտադրության մասին:

Ամերիկյան «հարավկովկասյան Մարշալի պլանը», թերևս, նշանակում է ԵՄ «Ընդլայնված Եվրոպա. նոր հարևանություն» ծրագրի ազդեցության սահմանափակում: Չնայած հեռանկարային առումով չպետք է բացա-

¹ Ի դեպ, մարտի 30-ին հայտնի դարձավ, որ Սերբիայի և Չեռնոգորիայի արտաքին գործերի նախարար Վուկ Դրաշկովիչը հայտարարել է, թե պաշտոնական Բելգրադը համաձայնել է Կոստվոյի կառավարումը հանձնել այլանազաններին: Կոստվոն կարող է իր ներկայացուցչություններն ունենալ միջազգային բոլոր կառույցներում, բացառությամբ ՄԱԿ-ի [69]:

² Խոսքը չի վերաբերում սոսկ ԲԹՁ նավթամուղին և ԲԹԷ գազամուղին: Արդեն գոյություն ունի Կասպյան ավազանից Վրաստանի և Ուկրաինայի տարածքով՝ շրջանցելով Ռուսաստանը, դեպի Եվրոպա գազամուղի կառուցման (ըստ որոշ հաշվարկների՝ \$2 մլրդ արժողությամբ) նախնական նախագիծը [71]:

ռել, որ դրանք կարող են փոխլրացնել միմյանց:

Կասսայան ավագանում սեփական զինված ուժերի հզորացմանն ուղղված քայլերը և տարածաշրջանի առնչությամբ աշխարհաքաղաքական նոր նախաձեռնությունը («Կասֆոր») Ռուսաստանը ներկայում դիտարկում է որպես Հարավային Կովկաս-Կասսայան ավագան-Կենտրոնական Ասիա գծում ամերիկյան նախագծերին խոչընդոտող հիմնական մեխանիզմ:

Ընդհանուր առմամբ, Ղարաբաղյան խնդրում առկա *status quo*-ի փոփոխության հիմնական նպատակը Հարավային Կովկասում ռուսական ռազմաքաղաքական ազդեցության վերացումն է:

Մեծ է հավանականությունը, որ արդեն այս տասնամյակի վերջին Ադրբեջանը որպես իր անվտանգության առաջնային սպառնալիք դիտարկի ոչ թե Լեռնային Ղարաբաղի խնդիրը (Հայաստանի ռազմուժը), այլ էներգա-կիրներով հարուստ (որոնք ուղղակի անփոխարինելի են ադրբեջանական պետության կենսագործունեության համար) Կասսայան տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումները:

Ղարաբաղյան իրադրության վերանայումն իր հետևանքներն է ունենալու ողջ Հարավային Կովկասի փոխդասավորվածության վրա՝ դառնալով նոր իրավիճակի ստեղծման հիմք: Այս առումով հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հարաբերություններում առկա հակասությունների անգամ ժամանակավոր մեղմումը հնարավորություն կընձեռի արմատապես փոխել ընդհանուր իրավիճակը տարածաշրջանում՝ համաձայն «Տրանսեվրասիական նախագծի»:

Նման իրավիճակը հանգեցնելու է Երևանում ու Բաքվում ամերիկյան ազդեցության աննախադեպ աճին, քանի որ Հայաստանի ու Ադրբեջանի անվտանգությունների համար էական՝ Լեռնային Ղարաբաղի հարցում նոր *status quo*-ի երաշխավորը դառնալու է Միացյալ Նահանգները:

Հայաստանի պարագայում ավելանում է նաև հայ-թուրքական հարաբերություններում երաշխիքներ տալու հանգամանքը, ինչը կարող է էլ ավելի մեծացնել Երևանի կախվածությունը Վաշինգտոնից:

Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի խնդրում առկա իրադրության փոփոխությունն օբյեկտիվորեն նպաստելու է միջին ժամանակահատվածի կտրվածքով Միացյալ Նահանգների ու ՆԱՏՕ-ի հետ հարավկովկասյան երկրների ռազմաքաղաքական փոխգործակցության խորացմանը:

Գալիք ժամանակահատվածում առաջնային կարևորություն են ձեռք բերելու Լեռնային Ղարաբաղի խնդրի կապակցությամբ ԱՄՆ-ի, ԵՄ-ի և

Ռուսաստանի միջև տարվող բանակցությունները¹: Այս առումով նույն եռյակի՝ իրանական հարցի կապակցությամբ տարվող բանակցությունները նույնպես կարող են իրենց ազդեցությունն ունենալ դարաբաղյան գործընթացի վրա: «Իրանական հարցին» առնչվող նոր բնույթի որոշակիացումը կարող է ազդել Լեռնային Ղարաբաղի շուրջ առկա զարգացումների վրա²:

ԼՂՀ խնդիրը Հայաստանի ազգային անվտանգության հիմնասյուններից մեկն է: Էական կորուստներն այդ հարցում կարող են հասարակական-քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական և, ընդհանուր առմամբ, համակարգային (այդ թվում՝ արժեհամակարգային) լուրջ ճգնաժամի պատճառ հանդիսանալ Հայաստանի Հանրապետության համար:

Այս առումով կարևոր է, որպեսզի դարաբաղյան բանակցությունների վերջնական նպատակը լինի ոչ թե փոխզիջումային կարգավորման ինչ-որ փաթեթի ձեռքբերումը, որը կարող է հետագայում ներքին անկայունության պատճառ հանդիսանալ հակամարտ կողմերի համար և այդպիսով ապակայունացնել տարածաշրջանը, այլ այնպիսի համակարգային մեխանիզմների ձևավորումը, որոնք օբյեկտիվորեն կխոչընդոտեն հակամարտությունների վերսկսմանը տարածաշրջանում՝ համագործակցության ու զարգացման բնական հարթություն հանդիսանալով ապագայի համար:

Մարտ, 2006թ.

¹ Թերևս, այդ բանակցությունները սկսվել էին դեռևս փետրվարի 15-ին, Վիեննայում. Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի ու «Եվրոպական եռյակի» (ներկայացնում էին Եվրամիության ներկա և ապագա նախագահներ՝ Ավստրիայի և Ֆինլանդիայի արտաքին գործերի նախարարներ Ուրսուլա Պլասսինկն ու Էրկի Տոտմիոյան, արտաքին կապերի և Եվրոպական հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատար Բենիտա Ֆերերո Վալդները, ինչպես նաև ընդլայնման և անվտանգության հարցերով հանձնակատար Խավիեր Մոլանան) միջև կայացած հանդիպման ժամանակ քննարկվել են Հարավային Կովկասում տիրող իրավիճակին, այդ թվում՝ Արցախյան հակամարտությանն առնչվող հարցեր: Մարտի 7-ին Վաշինգտոնում կայացած Քոնդոլիզա Ռայս-Սերգեյ Լավրով հանդիպման ժամանակ կրկին քննարկվել է Լեռնային Ղարաբաղի խնդիրը [73]:

² Իրանական հարցի շուրջ առկա իրավիճակը միգուցե պետք է ընկալել որպես ցուցիչ Ղարաբաղյան բանակցություններն ավելի լավ հասկանալու համար:

Հավելված

Ինչպես հայտնի է, ԱՄՆ հակահրթիռային պաշտպանության համակարգը բաղկացած է լինելու երեք մակարդակներից: Առաջին մակարդակը միտված է լինելու միջմայրցամաքային բալիստիկ հրթիռների ոչնչացմանը՝ մինչև միջուկային մարտազլխիկների առանձնանալը՝ այդ հրթիռների թռիչքի սկզբնական մասում:

Երկրորդ մակարդակի դեպքում օբյեկտները պետք է ոչնչացվեն միջմայրցամաքային հրթիռների թռիչքի, այսպես կոչված, միջին հատվածում, ուր տեղի է ունենում մարտազլխիկների առանձնացումը և թիրախների որոշակիացումը:

Եվ վերջապես, երրորդ մակարդակով նախատեսված է մարտազլխիկների ոչնչացում նրանց թռիչքի վերջնական մասում [74]:

Ակնհայտ է, որ նախընտրելի է հրթիռների և թռչող այլ օբյեկտների ոչնչացման գործում սահմանափակվել առաջին մակարդակով: Հետևաբար, էական նշանակություն է ձեռք բերում հրթիռային զինանոց ունեցող ԱՄՆ հավանական հակառակորդներին հարակից տարածքներում հակահրթիռային պաշտպանության համակարգի տարրերի հիմնումը՝ ռադիոտեղորոշիչ կայաններ, հակահրթիռային հարվածային միջոցներ և այլն: Այդ իմաստով Արևելյան Եվրոպա-Սև ծով-Հարավային Կովկաս - Կասպյան ավազան-Կենտրոնական Ասիա գծի երկրները Պենտագոնում ընկալվում են որպես հարմար թեկնածուներ:

Զուգահեռ, Հարավային Կովկաս-Կասպյան ավազան-Կենտրոնական Ասիա հատվածի վրա մեծ ազդեցություն է թողնում ԱՄՆ ռազմական գերատեսչության մեկ այլ նախաձեռնություն՝ շարժուն զորամիավորումների և օդային զլրբալ փոխադրումների համաշխարհային ցանցի ստեղծումը:

Հայտնի է, որ Պենտագոնի շարժուն զորամիավորումները պետք է բավական կարճ ժամանակահատվածում օդային ճանապարհով նետվեն որևիցե թեժ կետ և լուծեն իրենց առջև դրված ռազմական խնդիրը: Մասնավորապես, այդ գաղափարն է դրված ամերիկյան բանակում վերջերս ստեղծված «Stryker» հատուկ նշանակության զորաջոկատների հիմքում, որոնք հիմնականում բաղկացած են միջինը 3.5 հազար մարտիկներից և իրենց տրամադրության տակ ունեն մոտ 300 միավոր ռազմական տեխնիկա: Ըստ որոշ տեղեկությունների՝ ներկայում ամերիկյան ռազմական գերատեսչությունը նման զորաջոկատներ է տեղակայել Գերմանիայում և Իրաքում [74]:

Պենտագոնի շարժուն զորամիավորումների հայեցակարգի մյուս կարևոր տարրը աշխարհագրական լայն տարածում ունեցող ռազմաօդային ուժերի հենակետերն են: Այդ հենակետերը պետք է ոչ միայն ապահովեն ցանցակենտրոն պատերազմների պայմաններում «առաջին գծին» հնարավորինս մոտ գտնվող ամերիկյան գերազանցապես մարտավարական օդուժի գործառնությունը, այլև պետք է հանդիսանան նաև շարժուն զորամիավորումների տեղափոխման համար նախատեսված օդային զլրբալ փոխադրումների բաղկացուցիչ մասերը՝ որպես հանգրվաններ [75]: Ինչպես հայտնի է նման հենակետեր արդեն իսկ կան Կենտրոնական Ասիայում, նախատեսվում է դրանց ընդլայնում նաև Հարավային Կովկասում:

Աղբյուրներ և գրականություն

1. BP Statistical Review of World Energy, June 2005, p. 4.
2. *Сумеринли Дж., Байрамова А.*, Радарная политика Соединенных Штатов, Зеркало, 8 октября, 2005.
3. *Мамедов Д.*, Нам видно и слышно все, Военно-промышленный курьер, 19 - 25 октября, 2005.
4. *Крашаков А.*, Турция играет на двух трубах, Независимая газета, 6 февраля, 2006.
5. The National Security Strategy of the United States of America, March 2006, p. 18.
6. Stratfor, Azerbaijan: U.S. Forces Already on the Ground, April 15, 2005.
7. *Багиров М., Алекперов Э.*, Военспецы США уже осматривают азербайджанские аэродромы, Эхо, 6 декабря, 2003.
8. *Миркадыров Р., Плугатарёв И.*, В Азербайджане появятся военные базы США, Независимая газета, 18 августа 2004.
9. *Дадашев Г.*, США и Азербайджан подписали договор о дислокации американских военных, РИА Новости, 21 мая, 2005.
10. Stratfor, Azerbaijan: U.S. Forces, Bases Moving in This Year, April 12, 2005.
11. *Мамедов Д.*, Азербайджан перед выбором: революция или базы, Военно-промышленный курьер, 27 апреля - 10 мая 2005.
12. *Миркадыров Р., Теймурханлы Р.*, Азербайджан маневрирует между «молотом и наковальней», Зеркало, 20 января, 2005.
13. *Миркадыров Р.*, Американские солдаты высадились в Азербайджане, Независимое военное обозрение, 19 ноября, 2004.
14. *Александров С.*, Туркменские ориентиры военно-технического сотрудничества с Украиной, Независимое военное обозрение, 27 мая, 2005.
15. <http://www.globalsecurity.org>, Caspian Guard, June 2005.
16. *Lackey S.*, International Affairs Team is «Hidden Jewel», Seapower Magazine, The Official Publication of Navy League of the United States, Vol. 48, Number 8, August 2005.
17. *Rizzo R.*, Pentagon Aims to Bolster Security in Caspian Sea Region, Stars and Stripes, August 10, 2005.
18. *Алекперов Э., Алиев Н.*, Радиосвязь для служб безопасности, Эхо, 29 апреля, 2004.
19. *Rizzo R.*, Catching Drug Traffickers a New Priority, Stars and Stripes, August 10, 2005.
20. *Мамедов С.*, Пентагон укрепляется в Азербайджане, Независимое военное обозрение, 17 февраля, 2006.
21. ИА Regnum, США собираются модернизировать в Азербайджане две радиолокационные станции, 10 января, 2006.
22. *Алексеев А.*, Вооруженные силы Туркменистана, Экспорт Вооружений, № 3 (май-июнь) 2002.
23. *Аксенов П.*, Das Boot, <http://www.lenta.ru>, 27 января, 2006.
24. ИА Regnum, Ричард Перл: «Азербайджан не может быть независим в вопросах безопасности», 2 мая, 2005.
25. *Матвеев А.*, Иран окружают, Военно-промышленный курьер, 7 – 13 сентября, 2005.

26. *Чуприн К.*, Одно море на пять флотов, Независимая газета, 25 июля, 2003.
27. *Мясников В.*, Удар по американской стратегии однополярного мира, Независимая газета, 26 августа, 2005.
28. <http://www.dumaem.ru>, Иран-США: Каспийский узел, 6 июня, 2005.
29. *Матвеев А.*, Тройственный союз, Военно-промышленный курьер, 1 – 7 июня, 2005.
30. На Каспии начинается гонка вооружения, Зеркало, 31 января, 2004.
31. ИА Regnum, Каспийская флотилия будет развиваться, 28 мая, 2003.
32. *Гафарлы М.*, Мина с нефтяным запалом, Новые Известия, 20 октября, 2003.
33. *Мухин В.*, Военные вызовы Каспийского региона, Независимое военное обозрение, 16 января, 2004.
34. *Иванов В.*, *Мухин В.*, Каспийский страж примеряет американскую форму, Независимое военное обозрение, 22 апреля, 2005.
35. *Панфилова В.*, Удивительные переселения американцев в Центральной Азии, Независимая газета, 29 августа, 2005; *Дубнов А.*, Американцы обустриваются в Туркмении, Время новостей, 5 сентября, 2005; *Иванов В.*, *Плутатарёв И.*, *Панфилова В.*, Невероятные приключения американцев и русских в Туркестане, Независимая газета, 6 сентября, 2005.
36. *Мамедов Д.*, Азербайджанский план действий, Военно-промышленный курьер, 13 - 19 апреля, 2005.
37. *Александров С.*, Полезная стратегия, Независимое военное обозрение, 27 мая, 2005.
38. *Сыроежкин К.*, «Море мира-2002», Континент, 4 - 17 сентября, 2002.
39. <http://www.lenta.ru>, У Каспийской флотилии появился новый флагман, 31 августа, 2003.
40. ИА Regnum, Каспийский флот пополнится новыми кораблями, 9 марта, 2004.
41. РИА Новости, Иванов: проведение учений РФ с ВМС прикаспийских государств возможно, 5 июля, 2005.
42. *Данилова Д.*, Петербургская судостроительная фирма «Алмаз» до 2010 года построит для ВМФ России пять малых артиллерийских кораблей, РИА Новости, 30 января, 2005.
43. ИА Regnum, Петербургский «Алмаз» 7 октября спустит на воду корабль для Каспийской флотилии, 6 октября, 2005.
44. ИА Regnum, Первый артиллерийский корабль для Каспийской флотилии прибудет в Астрахань в 2006 г., 16 ноября, 2005.
45. *Ничипоренко М.*, В Петербурге состоится закладка корабля для ВМФ России, РИА Новости, 25 февраля, 2005.
46. *Иванов И.*, Главком ВМФ пообещал защитить Астрахань, Коммерсант, 17 ноября, 2005.
47. РИА Новости, Каспийское и Баренцево моря включат в систему глобального контроля, 28 июля, 2005.
48. РИА Новости, На обустройство южной границы РФ будет выделено 65 млрд рублей, 16 июля, 2005.
49. *Плутатарев И.*, Военным блоком - по браконьерам и террористам, Независимое

- военное обозрение, 27 января, 2006.
50. Пулин Г., Россия делится с Закавказьем даже снегом, Военно-промышленный курьер, 1 - 7 февраля, 2006.
51. Матвеев А., Щупальца Пентагона тянутся к Каспию, Военно-промышленный курьер, 20 - 26 апреля, 2005.
52. Оруджев Р., Махмуд Ахмади Нежад доволен развитием азербайджано-иранских отношений, Эхо, 21 декабря, 2005; Состоялась официальная церемония поставки иранского газа в Нахчыван, Зеркало. 21 декабря, 2005; Мамедов С., Иранская страховка для Ильхама Алиева, Независимая газета, 21 декабря, 2005.
53. <http://www.panarmenian.net>, Հայաստանի և Իրանի միջև կարող է երկարաժամկետ հարաբերակցություն հաստատվել, փետրվարի 14, 2006թ.:
54. Stratfor, Azerbaijan: A Field of Combat for Washington and Tehran?, May 16, 2005; Мамедов Д., Иранская дилемма Азербайджана, Военно-промышленный курьер, 25 - 31 мая, 2005.
55. <http://www.cnn.com>, Iraq drives Bush's rating to new low, March 14, 2006; Mott M., Poll: Bush approval rating hits new low, USA Today, March 14, 2006; CNN/USA Today/Gallup Poll: March 10-12, 2006 - Final Topline.
56. LaFranchi H., On Iran, West looks for a Plan B, The Christian Science Monitor, January 18, 2006; CIA, The World Factbook 2005.
57. ИА Regnum, Полномочия временной комиссии ПАСЕ по Нагорному Карабаху предлагается продлить, 10 января, 2006; ИА Regnum, Глава ОБСЕ: Кочарян и Алиев могут подписать соглашение уже в феврале 2006 года, 12 января, 2006.
58. Հարությունյան Ս., Հնարավոր է, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը որոշվի հանրաքվեով, Ազգ. դեկտեմբերի 23, 2005թ.։ ИА Regnum, Армения должна быть готова к возвращению территорий и неопределенности статуса Карабаха, 9 января, 2006; ИА Regnum, Азербайджан «окончательно одобрил идею нового референдума в Нагорном Карабахе», 11 января, 2006; Chivers C. J., Hopeful Signs Appear in Solving a Post-Soviet Impasse, The New York Times, February 2, 2006.
59. ИА Regnum, Eurasia Group: Рамочное соглашение по Карабаху фактически готово?, 10 февраля, 2006.
60. Համաձայնություն ձեռք չի բերվել, Հայաստանի Հանրապետություն, փետրվարի 14, 2006թ.։ ИА Regnum, Перед встречей с Кочаряном Алиев поговорил с Кондолизой Райс, 9 февраля, 2006.
61. Пугачев И., Москва зовет Грузию и Украину в «союз шестерых», Независимое военное обозрение, 13 января, 2006.
62. РИА Новости, Армяно-азербайджанский конфликт: возможно участие миротворцев РФ, 24 января, 2006; РИА Новости, Россия готова поставлять оружие как в Армению, так и в Азербайджан, 23 января, 2006.
63. Իրավունք, էջ 2, փետրվարի 24 - մարտի 2, 2006թ.։
64. <http://www.panarmenian.net>, ԵՄ-ն կոչ է անում Երևանին և Բաքվին նախապատրաստել իրենց ժողովուրդներին Ղարաբաղի վերաբերյալ հավասարակշռված համաձայնության, մարտի 3, 2006թ.։ <http://www.panarmenian.net>, Վս-

- շինգտոնը կոչ է անում Հայաստանի և Ադրբեջանի իշխանություններին վերջ տալ դադարադադարի հակամարտությանը, մարտի 9, 2006թ.:
65. ИА Regnum, В Ереване положительно оценивают факт продолжения переговоров президентов Армении и Азербайджана, 13 февраля, 2006; ИА Regnum, Глава МИД Азербайджана: Мы готовы к продолжению переговоров, 26 февраля, 2006; ИА Regnum, США и ПАСЕ сожалеют по поводу провала в переговорах по Карабаху, 14 февраля, 2006; <http://www.panarmenian.net>, ԵՄ-ն հուսով է, որ 2006 թվականը վճռորոշ կդառնա դադարադադարի հակամարտության կարգավորման համար, փետրվարի 17, 2006թ.:
 66. <http://www.panarmenian.net>, Մ.Մանն. «Եթե 2006 թվականին համաձայնություն ձեռք չբերվի դադարադադարի խնդրի շուրջ, դա իսկական ողբերգություն կլինի», փետրվարի 22, 2006թ.:
 67. <http://www.panarmenian.net>, Ն.Բըրնս. «ԱՄՆ Պետդեպարտամենտը հիասթափված է Ռաբրույեի բանակցությունների արդյունքներից», փետրվարի 27, 2006թ.:
 68. ИА Regnum, Новруз Мамедов: «Кочарян покинул переговоры незавершенными», 13 февраля, 2006; ИА Regnum, Кочарян и Алиев согласовали 7 из 9 обсуждавшихся вопросов, 12 февраля, 2006.
 69. <http://www.lenta.ru>, Сербия согласилась на самостоятельность Косово, 30 марта, 2006.
 70. РИА Новости, Статус Косово обсудят в Лондоне главы ведомств шести государств, 31 января, 2006; Колесников А., Владимир Путин поставил задачи дипломатии и армии, Коммерсант, 31 января, 2006; ИА Regnum, Контактная группа: статус Косово решится в 2006 году и может стать прецедентным, 5 февраля, 2006.
 71. Украина и Грузия будут тянуть трубу в Европу, Украинская правда, 16 марта, 2006.
 72. Palacio A., Twining D., Russia's Shadow Empire, The Washington Post, March 11, 2006.
 73. <http://www.panarmenian.net>, ԵՄ «Եռյակը» և ՌԴ ԱԳՆ ղեկավարը քննարկել են դադարադադարի կարգավորման հարցը, փետրվարի 16, 2006թ.; ИА Regnum, Лавров и Райс обсудили проблематику «замороженных» конфликтов, 7 марта, 2006.
 74. Смирнов Р., «Звездные войны»: новая версия, Независимое военное обозрение, 15 октября, 2004; Соловьев В., Иванов В., Военно-базовая удавка, Независимое военное обозрение, 27 февраля, 2004; Graham B., U.S. May Halve Forces in Germany, The Washington Post, March 25, 2004; <http://www.defensenews.com>, U.S. EUCOM to Remain in Germany Despite Changes, 19 August, 2004; <http://www.menewline.com>, U.S. Continues Operation Along Syrian Border, December 7, 2004.
 75. Тимоненков Р., Силы глобальных перевозок, Независимое военное обозрение, 12 августа, 2005; <http://www.defenseindustrydaily.com>, Delayed Pentagon Mobility Study Finally Offers a Preview, November 14, 2005.

РЕГИОНАЛЬНЫЕ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ РАЗВИТИЯ И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА

Саргис Арутюнян

Резюме

В евразийском пространстве сегодня происходит активное формирование новых геополитических матриц. В этом плане процессы, происходящие в Восточной Европе, бассейне Черного моря, на Ближнем Востоке, Кавказе, Каспии и в Центральной Азии, имеют системный характер.

В контексте вышеизложенного идет процесс создания новых интеграционных механизмов на Южном Кавказе, в бассейне Каспия и Центральной Азии – главным образом путем расширения американского военно-политического присутствия, осуществления геополитических и геоэкономических проектов и изменения регионального *status quo*. Между тем, любые процессы на Южном Кавказе (в частности, односторонние действия в отношении НКР), которые могут нарушить баланс сил, приведут к дестабилизации всего региона.